ՍՈՒՐԵՆ ԹԱՐԽԱՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Ծննդյան տարեթիվ՝ 10.06.1954

Ծննդավայր՝ ՀՀ, Մարտունու շրջան, գյուղ Զոլաքար

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Թարխանի Սարգսյանը Զալաքարի թիվ 1 միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 1983 թ. ընդունվել և 1988 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը:

1988 թվականից ուսումը շարունակել է ՀՀ ԳԱԱ առկա ասպիրանտուրայում, որն ավարտել է 1991 թ.:

2005 թ. «Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն 1908-1921 թթ.» թեմայով պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

2006 թ. ստացել է դոցենտի գիտական կոչում:

2016 թ. պաշտպանել է «Մկրտիչ Փորթուգալյանի հասարակական-քաղաքական գործունեությունը և «Արմենիա» պարբերականը» թեմայով դոկտորական ատենախոսություն:

2016 թ. ստացել է պրոֆեսորի գիտական կոչում:

1991 թվականին աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում որպես կրտսեր, ավագ, ապա առաջատար գիտաշխատողի պաշտոններում:

1992 թվականից համատեղությամբ դասավանդել է Երևանի պետական, «Գլաձոր» և «Հյուսիսային» համալսարաններում

Ս. Սարգսյանի գիտական հետաքրքրությունների շրջանակում են Հայոց նոր և նորագույն ժամանակաշրջանի պատմության տարաբնույթ հիմնախնդիրները՝ Հայկական հարց և Հայոց ցեղասպանություն, հայկական կուսակցություններ, պարբերական մամուլ, Հայաստանի առաջին հանրապետության, Սփյուռքի պատմություն և այլն:

Ս. Սարգսյանը հեղինակ է 16 մենագրությունների, (դրանցից մի քանիսը լույս են տեսել Ռուսաստանի Դաշնությունում և Եգիպտոսում), ավելի քան 150 գիտական հոդվածների, որոնք լույս են տեսել ոչ միայն ՀՀ-ում, այլև ԱՄՆ-ում, Ռուսաստանում, Ֆրանսիայում, Լիբանանում, Եգիպտոսում և այլ երկրներում: Դրանցից 2 ընդգրկված են Scopus/Webofscience (Q 1, 2023-2026) ՄԳՇ-ում: Համահեղինակել է «Հայոց պատմություն» ակադեմիական քառհատորյակի երրորդ հատորի առաջին (Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես-1918 թ.) և չորրորդ հատորի երկրորդ (1945-մեր օրեր) գրքերին, «Հայ պարբերական մամուլի պատմություն» (1900-1922 թթ., հատոր 2),, «Հայ ազգային ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ (1885-1914 թթ.)» հիմնարար երկերի, «Հայաստան» հանրագիտարանի և այլն:

Ս. Սարգսյանի գիտական ղեկավարությամբ ինստիտուտի 1 հայցորդ (Կ. Առաքելյան, 2017 թ.) հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

Ս. Սարգսյանը գիտական զեկուցումներով, դասախոսություններով և ելույթներով հանդես է եկել հանրապետական և միջազգային մի քանի տասնյակ գիտաժողովներում, կլոր սեղաններում, գիտագործնական սեմինարներում, երիտասարդ պատմաբանների ամառային դպրոցներում, սփյուռքահայ համայնքներում, Հայոց բանակի զորամասերում և այլն: Ս. Սարգսյանը պարգևատրվել է ՀՀ ԿԳՄՍ «Ոսկե մեդալով», ՀՀ ԳԱԱ գովեստագրով, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի վաստակագրով, ՀՀ ՊՆ պատվոգրով, «Գլաձոր» համալսարանի «Ոսկե մեդալով» և այլն:

Ս. Սարգսյանը կուսակցական չէ, ամուսնացած է, ունի երկու որդի և դուստր, երեք թոռնիկ: Ավագ որդին՝ Արթուրը, իրավաբան-գործարար է: Արմանը՝ պատմաբան-քաղաքագետ-գործարար է, գիտությունների թեկնածու: Դուստրը՝ Անին, ֆինանսիստ է: